



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԳ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարթ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Վերջապա Մը

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

Միայն Յնագանցութիւնը. ՋԱՐԵԶ ՆԵՄՅԷ

ԱՐՆՈՒՐ ՇՕՐԷՆՀԱՌԻԷՐ

Արիիւրապանութիւն

Յ. ԱԼՓԻԱՐ

Վերադարձը

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Լիւսիին Իճեայր

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

«Եւանգելիոն Ռեմանի Փրիւստիպուրիւնը»

X.

Կեօթե եւ Հիւլիօ. ՅԷՐԱՆ ՊԱՆՏԷՆՇԲԵՐԿԵՌ-Ի

ԼԵՒՈՆ ԷՍԱԶԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳ. ԶԻՆԱՆ

1907

THE HISTORY OF THE

ROYAL SOCIETY OF LONDON
FROM ITS ORIGIN TO THE PRESENT TIME

BY
JOHN HENRY LALOR

IN TWO VOLUMES
VOL. I.

LONDON
PRINTED BY
JOHN WATTS & SONS

1850

THE HISTORY OF THE

ՏՕՔՔ. Է. ՄՍ.ՄԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ:

୧୦.୫.୫ 12

աղիքներու , միդային համբաներու հիւանդութիւնները , ջղային ական-
բութիւնները , հին և նոր զաղխական ակտերը : Այս վերջին
ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթմորֆո-
զով կը բուժուի կարճ միջոցի մէջ , Հիւանդոց կ'ընդունին ամէն օր կէս
օրէ վերջը : Զօրեքայիթի օրերը միայն ձրի :



Անկարելի է որ ընտանիք մը առանց
կարի մեքենայի մնայ, բայց էական
կէտն է լաւ մեքենայ մը ունենալ,
որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ
եւ անհամար ծառայութիւններ կը
մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ
մեքենայ մը անկերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է ։
Ընդ որ աշխարհ գիտէ թէ՛

U H 6 4 5 R

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՄ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեկեւաներ
կը գտնուին :

մեքինան լաւագոյնն է . այս մե-
քենան ամէնէն աւելի կատարեա-
գործութեամբ, հաստաբունը և չիւրա-
գործածելին ըլլալուն՝ բովանդա-
պշարհի մէջ՝ ամէն ոք Սինկիեի մե-
քենաները կը գնէ :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Բնկերու-
թեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՂՃԱՐՈՒՄՆԵՐ

L. U. I. B. P. B.

REFU.

●●●●●

ԱՆԻՏՍՈՐ

1. Մեծ փողոց , Պոն Մառչէի դէմ, 343 և 343.
 2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւսէին դէմ .
 1. Սինկէր խան , Թիւնէլին հասւը .
 2. Գաբարէօյ , Թրամվէյի Լաշարանին դէմ .
 1. Սուլթան Համամ.
 2. Սուլթան Պէյազլի, Թրամվէյի Կալինին դէմ.13.
- Զարք Պօլս , Թ. 120 .

Դասերը եւ նորոգութիւնները ձրի .

ԿԱՏԱՐԵԱՒ ԵՐԱՇԽԱԼՈՐՈՒՔԻՆԸ :

Մասնանիւղէր գաւառներու բոլոր բաղաճներուն մէջ

Սինկեթի՝ Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

Ճ. ՍԻՄՕՆ.

Բարիկ



ՔՐԷՄ

ՍԻՄՕՆ

Կիսօրինակ պատշաճում
 եւ առանց որ եւ ի ներգրավում իսկի
 Լատագոյն արտադրութիւնն է
 ան՝ պահպանելու համար ԴէՄ-
 ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ
 Ճերմակութիւնը

1900ին բարիգեան ոսկի ձնադրամ

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
 ճաթառու քներուն , կարմրութիւններուն եւ խորշակահարութեան
 առաջըր կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի քրեմափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
 դէմքի դօշինն երիտասարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :

Պէտք է ամէն օր գործածել զայն , թաց լաթով մը մօրթին վրայ
 տարածելով եւ յետոյ մեղմ շփումով մը ներս թափանցել տալով :

Ճարդային ոչ մէկ մարմին չպարտաւանկելով , ամբողջ օրին կը
 լուծուի ջուրին մէջ :

ՍԻՄՕՆ Է ՍՆ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԵ ԸՂԼՍՅ ԲՈՒՈՐ ԳԵՂԱՆԷԷԻ ԳԵՐԱՍՏԱՆՈՒ
 ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարած , իսկապէս առողջապահիկ ու ամենատաաջ-
 նակարգ Քրեմն է ան աշխարհքեան : Բալանդակ աշխարհի մէջ
 իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
 որոնցմէ պէտք է խորշիլ ու խոյս տայ :

Քրեմ Սիմոնը , քրեմափոշի Սիմոնը եւ Սիմոնի
 օճառը կը պահպանեն զեղարաններուն , անուշահամու-
 թեան վաճառատուններու եւ պաղարհներու մէջ :

Գնած աւետի պէտք է լաւ ԲՅՅԷԼ վաճառանքի՞ր՝ ու պէտք է ըլլայ
 բովի պատկերին հիշատակը :





ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԱՆ

55րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 4

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

Մ Ա Յ Ր Ը

Բազմամբոխ ու տենդայոյզ անցորդներով անցքին վրայ, որ է կա-
մուրջը, ուր մարդային խուռնեքամ ալիք մը կը խաչածեւութի մէկ կող-
մէն միւսը, իր որոշ տեղը ունի ան, մուրիկ թշուառ կին մը, որ շա-
րունակ չպակսիր հոնկէ, իր դաժան, անբազմապիկ տեսքով: Դիւա-
հարի գլխաշարժ երեւոյթով հալածական, դժնետեսիլ իր կերպարանքը՝
սոսկում ազդող բան մը ունի: Անխնամ, ցիր-ցան, աղտոտ մազեր՝
բաց դուրիին վրայէն կը թափին ծոծրակն իւր, տարածուելով երկու
կողմէն ուսերուն շուրջը, ուր կը փութին տարազնաւ անկանոնութեան
մը մէջ: Փռած, հինուրդին, կիսապատառ ու աղտոտ ցնցոթիներ կը
ծածկեն մարմինը, ուր չլստի անյարմարութեան մը մէջ վրայի կտորը
աակինը կը ծաղրէ, աղքատի մաշուք մը ըլլալով զգեստին մէկ կտորը,
մինչ միւսը կը կրէ գրոշմը փառաւոր անցեալի մը, ո՛վ գիտէ ո՛ր մե-
ծահարուստ տունէն իրեն ողորմութիւն տրուած: Կոճակները կը պակ-
սին, թէ մուրիկի հնարամտութեան մը համար, կուրծքը բաց կը մնայ
շարունակ, պատառուածքին մէջտեղէն իրանը գրկող չիակին, որուն
բացուածքէն կը տեսնուի աղտով թռած, սեւ, կռած, արեւահար ու

չոր իր կուրծքը, որ դէպի փորը՝ կը վերջանայ անստոյգ ճեղքով մը , չփակին եռանկիւն պատառուածքին եզերքներէն ուրուանկարելով իր թոմթուկած , սեւ ծիծերը , որոնք , լսկած թուլութիւնով միտին փակած , կը կախուին կուրծքին երկու կողմերէն և կ'անհետանան գունատ , ազտեղի ու զազիր չապկի մը տակ : Մայթին մէկ չեմին վրայ , անպատկառ փռուածքով մը երկնցած , ոտքերը թաց խնամ , ջութերու մէջ , գրկուած ցեխոտ գուլպաներէ ու ծակծկած , լիքատուն կիսակօշիկներէ , կը զոփայ տեղացող անձրեւին ու ձիւնին տակ , որոնք կ'իջնեն անխնայ , թաց համբարներով մտրակելով իր մարմինը և անաւոր կերպով հովթիւրով թռուցիկ թերթերը իր պատառատուն զգեստներուն : Կծու , ցուրտ մը տեւականօրէն կ'ատլնտէ իր ընդարմացած մարմինը , մշտաճոտ արցունք մը գոյացնելով իր աչքերուն մէջ , ուրիշ ամօն կալլականելով կը սահի այտերն ի վար , հոն սառելով : Թիւերուն մէջ ազդարարանքով գրկած ունի միշտ աղեկ մը , իրը անկմակած , որուն կը ծծցնէ շարունակ , բերանը տուած սեւ պտուղներէն մէկը իր վտիտ , զալկացած ստինքներուն , որոնք ցուրտէն կաշիացած մորթի մօլքն են առած : Տղեկը , կուրծքին փակած , ուրիշ բնաւ չի՝ բամբակ գլուխը , կը ծծէ անդադար , կը ծծէ անյադ ցանկութիւնովը չնչատ բերանի մը , և կը թուի չյագենալ բերանին մատուցուած սնունդէն , որմէ անկըր հեշտանք մը զգալ կ'երեւայ : Իր պզտիկ խեղճ գլուխը կը կորսուի օդակին տակ մօրը թիւերովը կազմուած բահուանդին , կիսովին թաղուած ձորձերու այն շեղջին մէջ , զոր մօրը ձեռքը կը հաւաքէ անխոնջ՝ գլխուն վերեւ , ժողուրտելով քովերէն բացը մնացած ծայրերը իր պատառատուն , ծուէն-ծուէն զգեստներուն և հանդերձի կտորուանքներուն : Անցորդները , տենդայոյղ ու հապշտապ քայլերով , կ'անցնին իր չորս բոլորէն , անուշադիր այն աղաղակին , որ կը բարձրանայ եղական այդ զոյգը կազմող ընտանիքին բոյնէն , — մօրը բերնէն : Աղետալի պատուհասէ մը արկածեալի սրտակեղեք ու անարեկիչ վայնասունով , կրնը կ'աղաղակէ բարձրաձայն , կը ճուայ , կը ճէ , կու լայ , կը պաղատի , խնդրանքովը չնչին ողորմութեան մը , որ ապրուստը պիտի կազմէ իր ողորմուկ կեանքին , և իրմէ ետքն ալ , զաւակին : Դաժան ու տխրատեսիլ իր գիմագիծերովը , աղեխարշ լաց ու կոծի ճիչերով , աղմկայոյղ գոռում գոչում մը բրցուցած և կեղտոտ , պզգալի լալօն մը կախած երեսն ի վար , — ուր արցունքները խլինքին կը խառնուին , ճենճոտ պատկեր մը գծելով դէմքին ու անագեցիկ , չորագէտ երեւոյթ մը տալով իր կերպարանքին , — կ'աղաղակէ , կը ճուայ , կը հեծէ , կ'աղերսէ : Ոչ ոք կը լսէ իր ձայնը , որ կը կորսուի կծու և ասպնտող աղմուկին մէջ հովինն իր ճիչը կը խառնուի ու կը լուծուի փոթորկած , մոլեգին հոսանքին ու վուլուին մէջ սառնորակ քամին , որ դիւահար յորձանքներով ու պտոյտքներով կը շրջապարէ իր լուրտաբը , չորս

կողմէն մտրակելով զինքը, թաց ու խայթիչ շառաշներով Զինին մո-
լեգնած ու չուարուն բաթիւնները, կը տեղան իր վրայ, կը դարնուին իր
կիտամերկ մարմինին, կը հանդէն իր բաց կուրծքին ու բազուկներուն
վրայ, մեղմօրէն հալելով ուժէն այն կիսակենդան ջերմութեան, որ
կը ճառագայթէ իր ընդարմացած, դողդիլացող մարմինէն։ Անցորդնե-
րէն հազիւ պատահական գէմքեր, հրքեմն քանի մը բուխ-սիրտ մայ-
րեր, ցնցուած իր սղելխարշ աղաղակէն, կանգ կ'առնեն իր առջեւը,
և յուզուած մօր ու զաւակի ահաւոր տառապանքի այն պատկերէն՝ զոր
կը պարզեն երկուքը՝ գիրկ-գիրկի նոյնացած, փանաքի ողորմութիւն
մը կ'երկարեն անոր ափը, — բայց երկարած բոլոր ունեւորներու սիրտին
առջեւ, զթոթիւնան տարբի մը ակնկալութիւնով։

*

Ան գիշերը նորէն մայր ու զաւակ անօթի էին, սպառած քանի մը
օրուան ողորմութեան հաւաքոյթը։ Եւ մայրը եկեր նստեր էր նորէն իր
սովորական տեղը, տպաստանած կարեկցութեանը ողորմասէր անցորդ-
ներուն։ Անոնք պիտի ուղորմէին, պիտի տային, ու ինք անօթի չպիտի
մնար, չպիտի մեռնէր զաւակին հետ, պիտի անցընէր ա՛ն գիշերն ալ։
Մութը կ'իջնէր ու անցորդները կը դառնային կամաց-կամաց։ Ուրքի
հետքերը կը հատնէին ու ամբօթին աղմուկը կը դադրէր։ Լուսնիւնը
կը սկսէր արիւկ, խառնուելով մութին ու մրկոտ, ցնորայոյզ հովիւ։
Այդ օրը ոչ մէկ ձեռք կարկառած էր իրեն և գիշերը կը փրապետէր
արդէն։ Անօթի՛ էին երկուքն ալ, մայր ու զաւակ, առտուընէ իվեր,
անյոյս վերահաս գիշերուա՛ն ալ մէջ։ Շունչը կը հատնէր, կը ցամքէր
կոկորդին մէջ։ Պիտի մնային ատանկ. յոյսի նշոյլ մը պիտի չծագէր,
պիտի մեռնէին, թաց ու լարծուն գետինին վրայ, ուր ջուրի երկղներ
կը թրջէին, կը սառեցնէին թշուառ մօրը բոպիկ ոտքը ու թացերու մէջ
մնացած մարմինը։ Անձկութիւնը սկսաւ սաստկապէս խռովել իր հոգին,
չլատիչ տագնապի մը ենթարկելով զինքը։ Բռւն ցնցումով մը՝ իր մէջ
արթնցան անօթի մնացած կնոջ ու զաւակին կարօտութեանը հասնիւ
չկրցող մօր զգացումները, որոնք կը խկայեղէին իր միտքը ու կը
գրգռէին հոգին։ Կը խորասուզուէր իր մտալկիչ խոհերուն մէջ, ու
քանի՛ կը պատկերանար տէքին առջև, գիշերը, ցուրտ ու անյոյս պա-
տերու մէջ, անօթի մնալու հեռանկարը, կ'ահաբեկէր, կը դահանդէր։
Միջոյ մը, աչքերը մթնցան ու ալ բա՛ն մը չէր տեսներ։ Ահեղ սարսուռ-
ներ կ'ազդնէին մարմինը ու կը տուայտէր, կը տանջուէր տագնապա-
յոյզ խռովքի մը անձնատուր։ Ա՛լ միտքը չէր գործեր ու երեւակայու-
թիւնը կը ցնորէր, մտայլ տեսիլքներու բանդագուշանքին մէջ թափա-
ռուն։ Տղիկը, կախուած պտուղներէն դատարկ, պարպուած, չորցած
ստինքներու, որոնք կաթին յետին կայլակը չէին հոսեր, կը ծծէր,
ապարդիւն ճիգերով, բերանը ցամքեցնելով, իր վախ թուշերուն ցաւ
բերելով՝ ինչպէս բերան մը՝ որ պարապ չի՛ մը ծծելով՝ դա-

տարկութեան ուժէն ընդդիմահարուած՝ կսկծիչ ցաւեր կ'իջեցնէ այսուրուն :

Իր անօթութեան նստային մէջ, չյագեցող իր ցանկութեան բնազդէն դրդուած, տղեկը ուժ տուաւ իր նորարոյս սուր ակումներուն, անոնց ամուր սեղմումէն փնտռածը գտնելու բնազդական, անզիտակից յոյսով և ուժգնակի խածաւ յանկարծ զինքը զիւցնող մօրը ծիծը, տ'յնչափ կատաղօրէն ու մոլեգին որ՝ ընդոստ, լեզապատառ ճիշ մը արձակեց մայրը : Իր մարմինին ամէնէն փափուկ մէկ մասին արուած այդ կսկծիչ ցաւը՝ հոգի'ն այրեց ու բլքտեց, քանդեց իր սիրտին ու զգայութեան բոլոր լարերը : Յնորեցաւ, խելայեղեցաւ իր հոգի'ն հարուածող մտացնորիչ ցաւէն ետքը՝ մարմի'նն ալ այրող այդ սուր ցաւէն : Չզիտեցաւ ի'նչ ընելը, երբ գիրկին մէջ սեղմած իր գոհարը՝ ուժգին թօթեւելով կուրծքէն, ընդոստ բաժնեց իրմէ ու սուրալով վանդակորմին եղերքը, թեւերը կարկառած, նեւեց անդունդն իվար : Խուլ ճողփիւն մը ու ծովը բոլորչի պղտիկ երախ մը բանալով՝ իր մէջ ընկուղից իր ամենակուլ բազումներուն յանձնուած մարմինը : Երբ մօրը թեւերը պարապ մնացին, — այն Մօր Թեւերը՝ որոնք յաւիտենապէս անուշ Բեռն էին ունեցեր Չաւակին, — Մայրը ցնցուեցաւ, անաւոր այն պարապէն ու միայնութենէն՝ ուր կը մնար, և ցնորած, խելայեղ, թեւերը բաց, յիմարական ճիչեր արձակելով ու լալահառաչ կանչելով ա'ն՝ զոր կորսնցուցեր էր բազումներուն մէջէն, ցնորիչ գահալիքով, աւրչտուած, խառնիխուռն, ցիր-ցան մազերը հովին, խոյացաւ ծովին մէջ, ճչելով .

— Չաւակա . . .

ԵՆՈՎԻՐ ԱՐՄԷՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐՈՒ ՆՈՐ ՇԱՐՔ ՄԸ

Մասիսի մօտաւոր Թիւերով պիտի սկսինք հրատարակութեանը զրական ուսումնասիրութիւններու շարքի մը, նուիրուած մասնաւորապէս անգլիական զրականութեան ամէնէն այժմեական հոյակապ դէմքերուն, որոնք ժամանակակից մտաւորական շարժումին մէջ հսկայ դերերու հեղինակներ են և որոնք չեն ծանօթացուած մեր մէջ .—

ՌԵՏԵԱՏ ՔԻՓԼԵԿ

ՕՍԲԱՐ ՌԻԱՅԼՏ

ՌԻԱԼԹ ՀՈՒԻԹՄԵՆ

ՃԷՔ ԼԵՆՏԵՆ

Ասանցմէ՝ ձէք Լընտընի մէկ նոր գործէն, որ ամսամասն հոշտիկ մըն է տիրացած և մեծ յուզում առժած Անգլիացի ժողովուրդին մէջ, իր սարսաղադեցիկ դրուագներովը, պիտի ներկայացնենք նաև էջեր, որոնք վստահ ենք թէ բացառիկ հաճոյքով և հետաքրքրութիւնով պիտի կարդացուին : Կը վստահինք թէ, ուսումնասիրութիւններու այս շարքը, և իր յաջորդները, համակիր ընդունելութիւնով պիտի ողջնուին Մասիսի ընթերցողներէն :

ՎԵՐՋԱԼՈՅՍ ՄԸ

Ուզեցի գիտնալ՝ ինչո՞ւ համար , ա՛խ ,
Ա՛յնքան զեղեցիկ երեւցան ինձի
Այն վերջալոյսի վայրկեաններն՝ ուր նախ
Ամպերը գոյն մը առին պղնձի ,
Յետոյ քարադուն ծրարի մը ծոցէն
Թօթուեցին փրփրումն ոսկի շողերուն .
Պահ մ'ալ բռնկելով մայրամուտս բոցէն՝
Արիւնի բոսորն հագան սոգորուն .
Հո՛ւսկ իբր արեւուն դէմ պահելով լէն՝
Մոխիր մը քրքին իրենց պատրանքէն :

Գեղեցիկ էին՝ ո՛չ անոր համար
Որ կեանքի խորհուրդն ինձ նրկարեցին
Մօտ հորիզոնի մ'ուր բիւր տնկամար
Կը սուզուին կայծերն անհասնում իդձին .
Եւ ո՛չ՝ ուր անգայտ ու երեւային
Այդ երանգներով խո՛ւր իմ հոգւոյս
Արժնըւած պատկեր մը ցոյց կուտային
Իր ցոլացումին մէջ աղօսալոյս
Ուր անբիծ նախին ծաղկած վարդն ու կիր
Մանուան դալուկէն կը դառնար մոխիր :

Ո՛չ . այդ վերջալոյսն ընտած էր այն օր
Սո՛ւրբ սո՛ւրբ լեռներուն սարերը մըքին ,
Պատրելու զանոնք՝ քէ ցունց ու ցընոր
Ա՛յ ստելումը չէր անոնց անդունդին . . .
Անհուն ու օրֆեդ հրդեհէն անծայր
Արագ աչեցան առանց կիզումի՝
Շղարժի մը ներքեւ կարմիր ու պայծառ .
Բայց յետոյ մուրին դարձան մի առ մի՝
Սըր հուրքը վերջին մարած էր լըման . . .
Արեւէն խաբուած ամպերուն նրման
Լեռներն ալ՝ մածուած մուխով մը կապոյտ՝
Նորէն պողեցան իբրեւ մոխրակոյտ :

ԵՂԻՇԷ ՆՊԻՍԱԼ ԴՈՒՐՆԱՆ

ՍԻՐՈՅ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ներկայ սերունդին բոլոր սիրային տարիանքները բովանդակ մարդկութեան համար *meditatio compositionis generationis futurae*, e qua iterum pendent innumerae generationis են : Իրապէս, ինչպէս մարդկային ուրիշ կիրքերուն մէջ, խնդիրը չի գտնար զժառագութեան մը կամ անհատական շանի մը վրայ, այլ ապագայ մարդկութեան գոյութեանը և մասնաւոր կազմակերպութեանը շուրջը . այդ պարագային անհատական կամքը ամենաբարձր զօրութիւն մը կը ստանայ, մարդկային ցեղը յատկանշող կամքի մը կը փոխուի : Այդ մեծ շահագրգռութիւն վրայ կը հանգչին սիրոյ սրաւոյցը ու վսեմ հանգամանքը, յափշտակութիւնները, անհուն վիշտերը՝ զորս բանաստեղծները հաղորաւոր տարիներէ ի վեր անտաղտուկ կը նկարագրեն անթիւ անհամար օրինակներով : Ո՞ր նիւթ պիտի կրնար իր շահեկանութիւնովը գերազանցել այն նիւթը, որ ամենշութիւն ունի մարդկային ցեղին լաւ կամ գէշ վիճակին հետ . ինչ որ է անհատը մարդկային ցեղին համար, նոյնն է մարմիններուն մակերեսը՝ այդ մարմիններուն հանգէպ : Այդ պատճառով, շատ դժուար է տեսնի մը շահեկանութիւն ընծայել՝ առանց սիրային հանդոյցի մը . և հակառակ իր ամենօրեայ դորձածութեան, անսպառ նիւթ մը կազմէ միշտ : Երբ սեռերու բնազդը տարտամ և ընդսիրոյ բնազդը կը մասնաւորուի որոշեալ անհատի մը վրայ, պատճառը սա է որ՝ այդ միեւնոյն կամքը կը տենչայ ապրիլ նոր ու որոշ էակի մը մէջ՝ ճշգորէն սահմանուած : Այդ պարագային՝ բոլորովին ենթակայական սիրոյ բնազդը պատրանքի կը մտանէ գիտակցութիւնը, և շատ լաւ կը յաջողի սքծողով առարկայական հիացումի գիմակով մը, որովհետեւ ընտելութիւնը պէտք ունի այդ հնարագիտութեան գիմակով՝ իր նպատակներուն հասնելու համար : Որքան ալ անշահախնդիր ու իտէպլթուի սիրուած էակի մը նկատմամբ զգացուած հիացումը, վերջնական նպատակն է նոր էակի մը ստեղծումը՝ իր ընտելեամբ որոշադրուած . ապացոյցը սա է որ սէրը չի գոհանար փոխադարձ զգացումով մը, այլ էականը կը պահանջէ, ստացումը, այսինքն ֆիզիքական վայելումը : Սիրուած ըլլալու ստուգութիւնը չի միխիտարի, երբ սիրելիէն զրկուած կը մնայ մարդ . նմանօրինակ պարագայի մը մէջ՝ մէկէ աւելի սիրահարներ իրենց ուղեղը պայթեցուցած են : Ընդհակառակը կը պատահի որ չափազանց սիրահարուած մարդիկ, փոխադարձաբար սիրուած չըլլալով մէկտեղ, սիրելիին ստացումով, այսինքն ֆիզիքական վայել-

լուծուի կը գոհանան : Այսպէս են բոլոր բանի ամուսնութիւնները , վարձկան սէրերը կա՛ր լռեալութեամբ ձեռք բերուած սէրերը : Ամէն սիրա-
յին վէպի միակ ու ճշմարիտ նպատակն է զաւելի մը ծնունդը , թէեւ
առանկ բան մը միաքերնուն չանցընեն սիրահարները . վերջաբանին
առաջնորդող հանգոյցը երկընդդառան է : Ազնիւ , զգայնիկ ու գողտր
սիրով մը բնութեամբ անձեր՝ ի զուր . պիտի բողոքեն իմ վարդապետու-
թեանս բիրտ իրապաշտութեանը դէմ , առոնց բողոքները գոյութեան
իրատեսք չունին : Ապագայ սերունդին կազմութիւնը և ճշգրիտ ու
որոշ նկարագիրը անհունապէս աւելի բարձր նպանակ մը չէ՞ , անհու-
նապէս աւելի ազնիւ՝ քան իրենց անիրականալի զգայութիւնները և խեղ-
ցնորքները : Մարդկային կեանքին առաջագրած նպատակներուն մէջ
կա՛յ աւելի մեծ նպատակ մը : Ան միայն կը բացատրէ սիրոյ բո՛ւն
հրայքները , իր կատարած դերին ծանրակշիռ հանգամանքը և այն
կարեւորութիւնը զոր կ'ընծայէ ամէնէն աննշան միջադէպերուն : Երբ ,
առաջին ականարկով , երկու սիրահարներ ընդորովին անյարմար թուին
իրարու , այն ատեն պէտք է նկատի առնել այդ իրական նպատակը ,
եթէ կ'ուզուի պատճառը հասկնալ ա՛յնչափ հնարքներու , դարձուածք-
ներու , ջանքերու և անվերջ տառապանքներու՝ սիրուած էակը ձեռք
ձգելու համար : Ապագայ սերունդն է որ իր բացարձակապէս անհա-
տական սահմանումով կը մզուի դէպի կեանք՝ այդչափ վիշտերու և ճի-
զերու մէջէն :

Այո՛ , նոյն ինքն ապագայ սերունդն է որ կը ծիփայ չըջանալաց ,
որոշ , յամառ ընտրութեան մէջ , որ կը ջանայ գոհացում տալ սէր կոչ-
ուած բնազդին . նոյն իսկ ապրելու կամեցողութիւն է ան նոր էակին ,
որուն կրնան տենչալ և ծնունդ տալ երկու սիրահարները . ի՞նչ կ'ըսեմ.
անոնց ցանկալից նախաձեռնութիւն խաչածիւսումին մէջ նոր կեանք մը
կ'աւելեցի , ապագայ արարած մը կ'աւետուի , իբր կատարեալ ու ներդաշ-
նակ ստեղծագործութիւն մը : Անոնք կը տենչան ճշմարիտ միութեան
մը , իրարու մէջ ձուլումի . այն էակը , որուն ծնունդ պիտի տան , չա-
րունակութիւնը պիտի ըլլայ իրենց կեանքին՝ լիակատար փթթումի մը
մէջ . ծնողքներէ ժառանգուած յատկութիւնները , համախմբուած ու ձուլ-
ուած , երկու սիրահարներու մէջ երեւան կու գան : Ընդհակառակը՝
էրիկ մարդու մը և նորաւոր աղջկան մը միջև առաջ եկած փոխափարձ
ու յամառ հակակրօնութիւն մը՝ նշան է թէ անոնք անբարեկազմ , աննր-
դաշնակ ու դժբաղդ էակի մը միայն կրնան ծնունդ տալ : Այսպէս՝
Քալդէբօնի խօսքին մէջ խորունկ խմտտ մը կայ , երբ անգութ Սէմի-
րար — զոր օգային աղջիկ կը կոչէ — կը ներկայացնէ իբր պտուղ բռնա-
բարութեան , որուն յաջորդած է ամուսինին սպանութիւնը : [Յաջորդով]

Ա Վ Փ Ի Ա Ր Ա Բ Ա Ն Ո Ւ Յ Ի Ւ Ն

Ի՞նչ տարբերութիւն կայ բժիշկներուն և օրօնսպիկներուն միջև :

— Բժիշկները՝ մարդս պառկած ասինք կը մեռցնեն . իսկ օրօնսպիկները . . . քալած միջոցին :

*

Պարոն Ք . . . ամուսնանալէն երեք չարաթ ետքը , կինը՝ վաղահաս փութկոտութիւնով մը՝ մանչ-զաւակ մը կը պարգեւէ իրեն :

— Ձաւկիս ազուռ՝ ր անուն մը գտիր , կը խնդրէ Պ. Ք. . . իր մէկ բարեկամէն :

— Orient Express :

*

Ի՞նչ է սէրը :

Կարգուած զոյգերուն համար *corvée* մը , ալլամերձ կիներուն համար՝ սիրամաշուք մը , ինքնամատոյց կիներուն համար՝ հասոյթի ազրիւր մը , վիպագիրներուն համար՝ յաւիտենական և անսպառ նիւթ մը , այրի կիներուն համար՝ միթիթարութիւն մը , տունը մնացած աղջիկներուն համար՝ արգիլուած պտուղ մը , ստնտու կիներուն համար՝ կաթի ազրիւր մը , կաթերուն համար *rente viagère* մը և եօթանասուն տարեկան ծերերուն համար՝ անցեալէն . . . յիշատակ մը :

*

Շատ անգամ կիները «չէ՛» կ'ըսեն . մի՛ վհատիր . անոնց երկու «չէ՛»ն մէկ «այո՛» կը նշանակէ :

*

. . . Ունայնամիտ՝ ինչպէս ոչ ոք , և ինքնահաւան՝ քառսուն Իւսկիւտացիի չափ , ալքոլով լեցուն սրուակի մէջ դրուելիք երիտասարդ մըն էր մեր Կոմիկը : Երեւակայեցէ՛ք կարմիր , կաս կարմիր ֆէյսի մը տակ ապուշ ապուշ ձեզ նայող զոյգ մը խաժ աչքեր՝ ամբարտաւանօրէն մեծկակ ձեզունքներ՝ որոնց մէջէն Խասգեղի շոգեհաւ մը պիտի կրնար անցնիլ համարձակ՝ փակցուցէք ատոր տակ հաստ , չիկագոյնի զարնող անտանելի կերպով խարտեաշ պէխեր , ֆօզմեթիֆի ձեփով մը վերամբարձ , պէխեր որոնք իրենց հովանաւորութեան տակ կ'ստանեն բերան մը՝ որուն չրթունքները իրարու սօսինձով փակցուած ըլլալը պիտի մաղթէիր , թող չի տալու համար որնոյն իսկ բառ մը դուրս ցայտէր ձայնի և շունչի այդ ձագարէն , և պիտի ունենաք *inventaire*ը Կոմիկին զլխուն , զոր մարմինէն անջատելու համար՝ անբացատրելի գոյներով փողկապ մը վիզին փաթանելու սովորութիւնը ունէր հէք տղան , որ միւսնոյն ատեն չէկ ալ էր : Հայերէնս կարճ ըլլալուն և ազեղութիւններ որակող ածականներուս պաշարը համեստ , ահամայ կը

հրամարիմ նկարագրելէ իր կազմուածքին մնացեալ մասերն ալ, զորս լաւ մը թուելու համար *vétérinaire*ի վկայական մը չունենալուս շատ կը ցաւիմ . . .

*

Եթէ Աստուած այդչափ երկար մաղեր դրած չըլլար ազջիկներուն գլխուն վրայ, անոնք ինչպէ՞ս գլուխ պիտի կլլէին արդեօք մէյմէկ յիշատակ նուիրելու համար ամէն անգամ մէկը սիրելնուն : Ամէն յիշատակ իր բոյրը ունի և համով է թղթատել վերջուշումներու տետրակը :

*

Ֆեռնիկոյն անխելք պայքար մըն է, յիմար երազ մը, խօլ վաղք մը դէպի անկարելին, անտեղի մարմաջ մը և սխալ գաղափար մը՝ զոր առաջին անգամ տունը մնացած օրիորդ մը յղացած ըլլալու է, ինչպէս ֆօրսէին դադափարը անպատճառ կազ աղջիկ մը, երկուքն ալ սակայն զրկուած ըլլալնուն համար տարբեր բան մը յղանալու միջոցներէն :

*

Կիները, արհեստական արցունքներու այդ ազբիւրնները, որչափ ատեն որ դատապարտուած են մայր ըլլալու, թո՛ղ միտքերնէն հանեն թէ կրնան օրին մէկը ազատագրուիլ իրենց ուղած պայմաններուն մէջ : Ես կը զարմանամ իրենց խելքին . իբր թէ համով բաներ մը ըլլայինք մենք՝ էրիկ մարդիկս՝ հոգի կու տան մեզի նմանելու, մինչդեռ սրչափ անուշ բան է կին ըլլալը :

*

Վարդերուն և խանութներուն պէս, խելքս առտուններ կը բացուի : Դադափարներս՝ անկողինիս մէջ կը յղանամ . . . *faute de mieux* . . . Փոխանակ երկինքի երեսը նայելու, կնկան մը երեսը կը նայիմ և կը փառաբանեմ զԱստուած : Կնոջ մը, մանաւանդ սիրուած կնոջ մը դէմքին վրայ, արե՛ւ ալ կայ, լուսի՛ն ալ կայ և բոլոր մնացածները :

*

Ընթերցողներս ինձմէ աւելի խելացի, աւելի ուշիմ, աւելի բանգէտ կը նկատեմ միշտ :

*

. . . Առաջին անգամ որ կը փորձեմ ինդիբի նիւթ ընել Հայունին, ամէնքը մէկանց վրաս կը թափին, անաթեմա կը կարդան, կ'անիծեն զիս, իբր թէ Եփեսոսի տաճարը ես այրած ըլլայի : Բայց հոգ չէ, անշուշտ օրին մէկը Յիշեալին մէջ՝ ես ալ տեղս պիտի ունենամ . . . եւ Քրիստոսի ճակատի վրայիս . . .

*

Այսօր, ազջիկներուն հարիւրին իննսունին համար սէրը պարզապէս միջոց մըն է աղէկ կարենալ հագուելու : Արդուզարդի դարն է սա :

Եւ մտածել թէ՛ բռն ճշմարիտ սիրոյ մէջ՝ աւելի հանուելու խնդիր կայ, քան թէ՛ հագուելու :

“ԷՌԵՆՍԴ ՌԵՆԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ”

Վինսքոնզինի [Ամերիկա] Համալսարանին առջև «Փիլիսոփայութեան Տօքթօռի Աստիճան» ստանալու համար ներկայացուած քեզի մը նիւթն է առ, և հրատարակուած Համալսարանին թերթին մէջ : Հեղինակը, Հէռման Պաուէէր, իր նիւթը չա՛տ ճշգրտօրէն ամփոփած է : Ան զբաղած է միայն փիլիսոփայ Ռընանով, ինչպէս իր խորագիրն ալ կը յատկանշէ ծրագիրը : Մէկ կողմ թողած է՝ պատմագէտ Ռընանը, մարդաբան Ռընանը, երբայագէտ Ռընանը, վիպասան և կէս-ոգրերգու Ռընանը՝ Calibanի և Abbess de Jouarreի, բացի պղտիկ թափառումներէ այն մասերուն մէջ, ուր այս քմայքի գործերը լուրջ փիլիսոփայութիւն մը կը պարունակեն : Ան բաւականացած է ուսումնասիրել Ռընանի փիլիսոփայական փիլիսոփայութիւնը, քառոյական փիլիսոփայութիւնը և քաղաքական փիլիսոփայութիւնը : Ասպարէզը դեռ բաւական ընդարձակ էր : Մօտէն ուսումնասիրած է Գիսնոքեան Ասրագանը, զոր մեծ իրաւունքով կը նկատէ Ռընանի միտքին խորիւխը, Փիլիսոփայական Տրամախօսութիւնները, Նաւակ Պեռքօիւնը, Թիլիսոփայութիւնը, ուր, հեղինակին մտասեւեռումը, այսինքն մարդուն Միտքը կը յայտնուի, և Փիլիսոփայի մը Խիղճի Բնկործիւնը : Կարգացած է նաև, խոր ուսումնասիրութիւնով, ի՛նչ որ դրուած է Ռընանի վրայ, Ֆրանսայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի մէջ, առանց աղբուելու և ծանրաբեռնուելու ուրիշներու կարծիքէն և մեծ լայնախոհութիւնով մը : Սակայն, նախընտրաբար, իրեն առաջնորդ կ'ընտրէ քիչ մը՝ Ռընանի վրայ աշխատութիւնը Սէյալի : Պէտք չկայ ըսելու թէ՛ Պաիւնթիէն, Պաանտէս, Լըմէթը, Մօնօ, Սէնթ-Պէով, Շէնէն, Վօկիւէ՝ իրեն ծանօթ են ճշգրտօրէն և ընտանեպէս և որոնցմէ կ'օգտուի մեծապէս, առանց կուտակելու անոնց մէջըրուումները և ակնարկութիւնները, ինչպէս վայել է գործի մը՝ որ կոչուած է ըլլալ կուռ, առանց ուսուցիկ ըլլալու, դառնալու համար հրահանգիչ, առանց չնչահեղձելու : Հէռման Պաուէէն շատ պայծառ միտքի տէր գրողէտ մըն է : Աղէկ ըմբռնած է թէ՛ կարելի չէ աղւոր գիրք մը յօրինել Ռընանի վրայ, առանց 1. աչքի առջև ունենալու բոլոր այն ճարտարութիւնները թաշտուն միտքի մը՝ որ եղած է . 2. առանց հետեւելու շարունակ ուղիղ գիծի մը : Յայտնի է թէ ի՛նչ ըսած է Տիտլուօ մեղեդիին, երգին համար . «Պէտք է երգասացութիւնը նկատել գիծ մը և երգը ուրիշ գիծ մը՝ որ միւսին վրայ կը պլլուի օձապտոյտ» : Եւ խոհանքը Ռընանի՝ այդ երգասացութիւնն է և այդ սեղեղին : Ռընան ունի տեսակ մը արմատական մտածում, որ շարունակական գիծ մը կը կաղմէ : Եւ ունի հազարաւոր երկրորդական մտածումներ, խիստ յանդուգն և խիստ արկածախնդիր, միեւնոյն ատեն՝ խիստ թափառաշրջիկ, և յաճախ, նոյն իսկ, արտակեղծոն, որոնք կը կաղմեն ուրիշ գիծ մը, օձապտոյտ պլլուող միւսին, որ թէև ամէն վայրկեան կը մեկուսանայ անկէ, բայց չբաժնուի անկէ և նորէն կը դառնայ անոր : Տիտլուօ կ'աւելցնէ . «Եւ քանի՛ այդ երգասացութիւնը,

Երգին արկաբը , ըլլայ ուժգին և ճշգրիտ , ա՛յնչափ Երգը , որ անոր
 հետ կը նոյնանայ , զայն կը կտրէ նո՛յնչափ բաղձաթիւ կէտերէ» :
 Ճիշդ նմանը , ո՛րչափ արմատական և մտերիմ գաղափարը Ռընանի
 քով ուժգին և ճշմարիտ է , նո՛յնչափ քմայական , երեւակայական և
 արկածաւէր գաղափարը [Տեսնել Փիլիսոփայական Տրամախօսութիւն-
 ները] կու գայ միանալ արմատական գաղափարին , վայրկեան մը չփոթ-
 ունելու չափ և զայն խաչածնելու համար նո՛յնչափ բաղձաթիւ կէտերէ :
 Պէտք չէ ուրեմն , ինչպէս Սէնայլ ըրած է , երկու Ռընաններ տեսնել ,
 մէկը 1870էն առաջ , միւսը 1870էն ետքը : Պէտք է ուղիղ գիծ մը քաշել ,
 որ երթայ Գիտութեան Ապագանէն՝ Փիլիսոփայի մը Խիղճի Բնեւորիւնը ,
 անցնելով Փիլիսոփայական Տրամախօսութիւններէն և Նախկին Պեռք-
 յօինէն , և ցուցնել թէ այդ գիծը ուղիղ է իրաւցնէ , պարզելով այն
 խոտորումները՝ որոնց ենթակայ եղած է հեղինակը անկէ դուրս , միշտ
 դառնալու համար նորէն անոր : Ինչպէս Ռընան ինքն ալ կ'ըսէ , երբ
 օր մը ինքնաքննութիւն մը կը կատարէր , ըսաւ . « Հոս քիչ մը ինք-
 ղինքս կը պաշտպանեմ . բայց ես գուշակ չեմ . ես խորհող մըն եմ . և
 իբր այդ՝ պէտք է ամէն բան տեսնեմ . կատարեալ գործ մը պէտք չէ
 հակաճառութեան առիթ տայ» : Իւրաքանչիւր գաղափարի հակառակը
 պէտք է հոն ցուցադրուած ըլլայ , անանկ մը որ՝ ընթերցողը մէկ ակ-
 նարիով ընդգրկէ այն երկու հակընդդէմ երեսները , որոնցմով կը կաղ-
 մուր ամէն ճշմարտութիւն» : Եւ ի՛նչ էր այն արմատական գաղափարը
 զոր երբեք չէ լքած Ռընան , և որուն դէմ անհաւատարմութիւններ կը
 գործէ , բայց այն տեսակ մասնաւոր անհաւատարմութիւններ՝ որոնք
 ցանկալի առարկային կ'առաջնորդեն և որոնց համար Բառքալ կ'ըսէ .
 « Միւսնոյն գաղափարին յարումը կը յոգնեցնէ և կը պնդէ մարդուն
 միտքը : Ասոր համար է որ՝ սէրի հաճոյքին ամբողթեանը համար , եր-
 րեմն պէտք է չզիտնալ թէ մարդ կը սիրէ . և ասիկա անհաւատար-
 մութիւն մը գործել չէ , որովհետեւ մարդ ուրիշը չսիրեր . ատիկա ամ-
 րապնդուիլ է աւելի աղէկ սիրելու» : Եւ ի՛նչ էր այն արմատական գա-
 ղափարը՝ որմէ երբեմն Ռընան կը հեռանար , բայց ինչպէս դարձեալ
 ըսած է Բառքալ , « զայն չհշտելու համար միշտ» : Այդ գաղափարը
 կրկնակ հաւատք մըն էր՝ հաւատք Գիտութեան , հաւատք Բարոյա-
 կանի : Այս կարծեցեալ սկեպտիկը՝ երկու հաւաստի ունեցած է , կորովի ,
 խորապէս արմատաւորուած և անարմատաւորելի : Հաւատացած է Գի-
 տութեան , առջի օրէն մինչև վերջինը , համոզուած թէ՛ ինչ որ ունինք
 միտքի մէջ , անկէ կու գայ մեղի և մի՛այն անկէ , և ան իր մէջ կը պահէ
 մեծ գաղտնիքը՝ զոր չէ յայտնած տակաւին , որովհետեւ թոթովելիք-
 ներ ունի դեռ , բայց կարելի չէ որ չյայտնէ օր մը , և թէ մարդուն
 պարտականութիւնն է զօրացնել Գիտութեան ուժը և զայն խօսեցնել ,
 որպէս զի ան վերջապէս յանձնէ մեծ գաղտնիքը , և որպէս զի , օր
 մը , կարելի ըլլայ « զիտականապէս կաղձակեալ մարդկութիւնը » :
 Ահաւաստիկ մէկը Ռընանի հաւաստիներէն , ա՛յնչափ խոր և ա՛յնչափ հզօր ,
 որչափ միւսը , որուն վրայ պիտի խօսինք յաջորդով :

ԼԻԻՍԻԻՆ ԻՏԵԱԼԸ

Ս.

. . . Տակաւին աչքերուս դէմ յամառ տեսիլքի մը պէս կը ցցուի իր պատկերը, ամէն անգամ զինքը յիշելուս, իր խելայիզիւ, մոլորեցնող սեւ աչքերուն խոստմնակից դիւթանքովը, որ ա'յնչափ հրաւիրող ու յուսատու գրոշմ մը ունէր, իր բուստէ հրաւրաւ շրթունքներուն անմեկնելի շտմեղանակութիւնովը և անվրէպ ձգողութիւնովը իր անհանգարտ, կրակաւոր խօսքերուն ու շարժումներուն: Ու հիմա, յիշատակներու առթած վայրկենական—ու երբեմն երկարատեւ—զգայութիւններու կամ գեղունակներու աշխարհին մէջ եղանակ հանդիպումներու պահուն—թուի ըլլան անոնք կամ խորտակալ, մանաւանդ խորտակալ՝ իրեն պէս—կ'երազեմ իր անպարտիչ ու փայլալիկ դիմաստուերը, ա'յնչափ խռովիչ ու մագնիսող կախարդանքով մը օժուսակայն, — հիմա՝ որ . . . բացակայ է:

Լիւսի՞: Անունին մէջը չի՞ հնչեր անօրինակ երաժշտութեան մը թրթուռն մըմունջը, մէկը այն անորժալուր դաշնակութիւններէն՝ որոնց պիտի տարուէր մարդ զաղափարներու զուգորդութիւնով, գեղանի տրուեստագիտունի մը հաւանօրէն ակնարկուած ըլլալու հաճելի մտածումով մը մանաւանդ: Իր մոլորանքին մէջ, ուղեկորոյս շի՛ք բարիզունի՞ մը արդիօք, կամ կիսաշխարհիկ սիրուն երգչունի՞ մը՝ որ վերջապէս Բերտի մայթերուն վրայ գտած ըլլար իր ճամբուն ելքը, մեղի, ամէնուս մտերիմ այդ հանգըրանին մէջ արժեցնելու համար քիչ մըն ալ՝ իր ձայնին ու միտին հրապոյրները հաւասարապէս: Ո՛չ մէկը, ո՛չ միւսը: Լիւսի . . . Հայունի մըն էր: Համեստ դիրքի տէր Ղուկաս աղայի մը և Փառանձեմ տուտուի մը մէկ հատիկ չփայցած աղջիկը . . . Պաարաստուած էիք այս յայտնումին յանկարծական . . . հմայաթափութեան:

Ղուկաս Սիմօնեան չուկացիի խիստ հետաքրքրական տիպար մըն էր: Տպածոյի, արխիթանի և կիներու յատուկ արդուզարդի առարկաներու այս խանութպանը կը պատկանէր միջակ դասակարգէ ա'յն տնաչէն մարդոց, որոնք իրենց վաստակին մեծ մասը ընտանիքին բարօրութեանը կը յատկացնեն: Իր պարկեշտ վաճառորդի համբաւը—իրականին մէջ կատկածելի—զինքը շատ անգամ խել մը անպատեհութիւններէ վրկած էր: Անոնք արգիւնքն էին այն չարաշահութիւններուն՝ զորս ինքը աջաբացութիւն բառով կը սահմանէր, և որ իրեն դրացի Յոնի խանութպանի երէն ոմանց կողմէ գլուխի հաւանութեան շարժումով չէ՛ որ կ'ընդունուէր, այլ աչքի հեգնոտ քթթումներով, հակառակ այս վեր-

ջիններուն ալ ապահովարար միեւնոյն կերպաւն չինուած ըլլալուն : Ղուկաս աղան եղական էր մասնաւոր տպածոն ու ամերիկանը կանգունով չափելուն մէջ : Բթամատին ու ճկոյթին խորհրդաւոր գաղանիքը ի՞նք լուծած էր ամէնէն յաջող կերպով : Ի՞նչ ճկուն ու մեքենական արագաշարժութիւնով մըն էր որ՝ կառանկրուն որոշ չափէն կը զեղչէր , մասներու հրաշալիօրէն ճապուկ դարձուածքով մը : Տիրող տնտեսական սուր տաղանապին մէջ՝ ի՞նչ ընէր սակայն խեղճ մարդը , եթէ այդ հանճարեղ միջոցին ալ չդիմէր . . . : Երանելին ամէ՛ն բան այդ կանգունին կը պարտէր . . . կանգուն մնալու համար :

*

Ամերիկեան գիշերօթիկ վարժարանը՝ որուն տարիներով աշակերտած էր Լիւսի , շատ մը յիշատակներով սիրելի էր մնացած էր իրեն : Աղջիկներու այդ մասնաւոր թօյնին մէջ , ամէն բանէ առաջ , «Լուսիա»ն «Լիւսի»ի ալակերպած էր , մոգական դաւադանի միակ հարուածով մը , ինչպէ՞ս դեռ շատ մը հայացի բարքեր , այդօրինակ միջաւայրերուն մէջ , կ'օտարանան , կը խորթանան գգալարար , մեր ընկերային-ընտանեկան բնատոնմիկ յատկութիւններուն և ըմբռնումներուն սպառնալու , մտահոգութիւն պատճառելու աստիճան . . . : Եթէ այդ պատուաստումը սուղջարար , բարերար պայմաններու տակ կատարուած ըլլար , ո՞վ պիտի համարձակէր դժգոհ շարժուծեւ մը փորձել . . . : Օտար հաստատութիւններու մէջ , շատ անգամ , ամէն բանէ առաջ , չէ՞ որ կ'եղեւին , չղարին փայլն է որ՝ յափշտակութիւն կը պատճառէ , որմէ անհատատ , անուժ նկարագիրներ ու հոգիներ այնքան դիւրութիւնով կը գրաւուին ապշահար . . . : Ատանկ կեղեւներու միջուկը ի՞նչ պիտի կրնար ըլլալ . . . : Առաջին տարին մէջ , արդէն , Լուսիա իր Հայ ընկերուհիներէն ոմանց անուններէն կրած նախապաշարումէն , թէ . . . օտարալի մթնոլորտին հակադեցութենէն , թօթափած էր իր բուն անունները—Թերեւս քիչ մըն ալ ծաղրելի գանկուն , մանաւանդ երբ Հռոմէական օրիորդի մը կողմէ «Լուցիքա» կոչուէր—և փութացած՝ դանոնք վերածել «Լիւսի Սայմընս»ի . . . : Այդ փոփոխութիւնը տննմար չանցաւ սակայն : Իր թաւշտփափուկ աչքերուն երազային նայուածքը , իր բարեձեւ , ճկուն հասակը , խարտեաչ մաղերու և գանգուրներու տակ ծածկուած նեղ՝ բայց գրաւիչ ճակատը , փայլուն , ձիւնասպիտակ մօրթը՝ կառուցուցած էին արդէն իր դասընկերուհիներէն մէկ քանին . . . : Եւ ահա անոնցմէ մէկուն կողմէ սա անխորհուրդ բացաղանջութիւնը՝ որ շուտով իր արձագանգը ունեցաւ .

—Լիւսի Սայմընս , սա մեր գիացած Հայ պառնանիին աղջիկը չէ՞ . . .

Եւ սակայն , զայրոյթի քանի մը կաթիլ արցունք , բողբոջ մը Միս Ռօճըրսին , բարեացակամ քանի մը բառեր՝ իրեն համակիր բարեկամու-

հիներէ զինքը չուսով հանդարտեցուցին : Այս անգըր ակ' չկրկնուեցաւ : Եւ Լիւսի Սալմընս սկսաւ վայելել իր կրճատուած նոր անուէր , միամիտ հոգարտութեան զգացումով մը : Եւ ինչպէս չխրոխտար : Իրեն համար ոչ միայն որ եւէ հրապոյր չունէին բոլոր Պաշտառները , Ոսկուկները , Մարիամները , այլ արհամարհոտ շարժում մը կ'առնէին իրեն՝ ամէն անգամ որ այդ անուններէն մէկուն հանդիպէր իր շուրջը : ստնտուի , սոպառուհիի յատուկ անուններ ամէնքն ալ , իր բմբռնումով , Պարտիզակցի ըլլային անոնք թէ Պոլսեցի . . . : Ու զիմադրիծերը խորչումի արտայայտութիւն մը կ'առնէին , իբր թէ անլուր , գայթակղական բան մը ըլլար պատահածը . . . :

Այս տեսակ նորանշան ձգտումներով էր որ շարունակեց վարժարանին ընթացքը իր անսովոր քրահածոյքներուն , նախասիրութիւններուն եւ օտարամէտ բաղձանքներուն կարելի եղածին չափ գոհացում տալով : Ո՛ւր պիտի յանդէր այդ հոսանքներուն ուզողութիւնը . . . : Իր պղտիկ ու զեզին մէջ , ապահովաբար աննշան անկիւն մը չէ որ գրաստած էին կառական բոլոր աւելի կամ պակաս ունայնասէր մտածուները եւ նկատումները : Արդու զարգը , աշխարհիկ զբօսանքները , նուազը եւ զրական ընթերցումները որո՞չ չափով մը եւ բռն կերպով համակրանքին արժանապատէյն այս տանըլեց տարու գեղանի աղջկան : Դպրոցական դասերէն դուրս , որոնց մասին ալ անտարբեր չէր , անոնք իր սիրելի զբաղումները գարձան : Եւ երբ , օր մը , վերջապէս , բոլորեց իր շրջանը , իր ընկերութիւններուն հետ , ինքն ալ հագնելով ընթացաւարտ օրհորդի անխուսափելի սեւ զգեստները , — որոնց մէջ , իր վէնիւսական գեղեցիկութիւնը պաշտելի շեշտումով ճառագայթումներ ունեցաւ , — եւ անգլիերէն լեզուով արտասանեց իր «աւարտական ճառ»ը՝ «կնոջ Դերը Արգի Ընկերութեան մէջ» , հանդիսականները , — գեղապաշտները մանաւանդ , — ծափերու տեղատարափի մը մէջ չփաղցուցին զինքը , իր բանախօսութենէն աւելի՝ «ցօղաթուրմ վարդի կոկոն»ի զգլխիչ տեսքէն յափշտակուած . . . :

*

Քօլէճէն տուն՝ իր յաղթական վերադարձէն ետքն է որ սիրտ Լիւսիին կեանքին «կազմաւորումի ծրագիր»ը ուրուազծուիլ : Օ՛հ , սրչափ տափակ էր տունին մթնոլորտը եւ սրչափ ածայի : Ո՛ւր էին այն ընկերութիւնները , որոնց հետ արձակ համարձակ , լեռներու , գաշտերու , պարտէզներու գեղածիծաղ բուսականութեան մէջ՝ պտոյտներ կը սարքէին մէկտեղ , երգելով , խնդալով , ճռռողելով , իրենց կոյսի նորազարթ ընաղդներուն անմեղութեանը մէջ , երբեմն մօտակայ մանչերու վարժարանին տղոց հետ կատակելով , կամ ձմեռը , բացառիկ պտոյտի մը պահուն , ձիւնագնդակ խաղալով : Վարժարանի կեանքին հրապոյրներուն անուշութիւնը հիմա կը զգար ու զրնար գնահատել , երբ , յան-

կարծական խղութեն հաքը՝ բոլոր այդ երջանիկ անցքերուն , կը յիշէր զանոնք , այդ աղետը , սիրելի՛ ժամանցները , որոնք երկուր ասան՝ օրօրած էին իր հոգին և որոնք , իր ներկայ անտանելի ծանձրոյթին մէջ , կը թրթռային իրենց անցեալին բոլոր մտերիմ հրապոյցներովը ու ժողովներովը՝ միտքին խորը՝ անմոռանալի ու երկարատեւ զգայութիւններու նման . . . : Տունին կեանքը իրա՛ւ անհանգուրժելի էր . . . Լիւսինն : — Մայրը , այդ աւանդապահ , զգուշաւոր տրամադր , ամէն բանէ առաջ խաթուն կին մըն էր , ընտանեկան յարկին կապուած անյեղլի գործերունքով մը , որ կը բաժնուէր իր ամուսինին և ազջկանը միջև : Իր պարտաճանաչ և ինսպասէր կնկան առաւելութիւններուն մէջ , անիկա տունին հոգին էր : Եւ սակայն , հին Հայու կնիկն էր ան՝ Լիւսինն աչքին , որ հակառակ իր մօրը մէջ ողջունելու անոր պարզուկ լնայութիւնէն և պահպանողական օգիէն՝ զո՛ւար սիրտ մը , հեզնոտ վերաբերում մը կ'ունենար անոր մասին , ամէն անգամ որ խոհանոցէն հրատանեալ կ'երթնէր , անական մաքրութեան , ճաշի , լուսաքի և դեռ ուրիշ ասօրեայ դրապումներու անձնատուր , թեւերը սոթաւած , զգեստին քղանցքը մէջքին հաստատած , անդադար աւելելով , մաքրելով , խոհանոցը վարելով՝ անձնուէր սպասուհիի մը նման : Այդ չարաշաւթիւնը՝ ակներե անհանգստութիւնն իր կը պատճառէր Միւ Լիւսինն , որ , օր մը , չհանգուրժելով մօրը այդ չափազանց հոգածու և պարկեշտ աշխատութեան :

— Մամա՛ , գոչեց , մեզի կը վաղի՞նք աչքայս տեսակ դճուճ զբաղումներով ժամանակ անցընել . . . սպասուհի՛ մը բռնենք :

Տիկին Փառանձեմ կանգ առաւ սեմին վրայ , ազջկանը այս բացատգանչութիւնէն զարմացած : Ի՛նչ , սպասուհի՞ , երբ , ինքը , միամիտակ նոնցմէ տասը հատին գործը կրնար տեսնել : Եւ ազջկանը պատասխար խանկայ լուրջ չեչտով մը .

— Ատանկ ամերիքանի [ամերիկեան] միտքերուն տեղը չէ . մենք հսկա՞ մարդիկներ ենք . պետքեւեն ի՛նչ պիտի բնենք :

— Վազը միւս օր հիւրեր և ընթրիքեյնեկներ կրնանք ունենալ . . . պէտք է ընդունելութեան օրերնիս որոշենք . մեր հօսքերը ի՛նչպէս սքով պիտի ընենք . ատանկ տձեւ բան կ'ըլլայ :

Մայրը՝ առանց բան մը ըսելու՝ սենեակէն դուրս ելաւ :

Բարի կինը , արդէն , ժամանակէ մը իվեր կը նշմարէր իր ազջկանը մէջ՝ բոլորովին աչքառու փոփոխութիւն մը : Անոր արդու զարդին պէտք հանգստանքը , սեւածիր աչքերուն նուազկոտ արատայատութիւնը , ամբողջ մարմինին մասնած տխրօթին զգլխի թուլութիւնը՝ իր միտքը կը վրադնէին մեծապէս : « Հատուկ ազջի՛ սենեակին աչք փորձանք բան է », կ'ըսէր ինքնիրեն , « մանաւանդ ատանկ ամերիկեան զարդէն ելածները » : Ի՛նչ օգուտ սակայն : Դուկաս աղան անանկ ուղած էր , և ինքը՝ երկանը խօսքէն չէր կրցած անցնիլ :

Երբ այն իրիկունը հայրը ներս մտաւ , և իր սովորական բարեւը տալով իր անկիւնը գրաւեց , Լիւսի առիթ վնասեց հօրը բանալու այս խնդիրը :

Ճաշէն առաջ , Տիկին Փառանձեմ խոհանոց իջած էր : Աղջիկը՝ հօրը դառնալով յանկարծ քանի մը փաղաքուշ խօսքերու մէջ .

— Բարա , աղւո՛ր քաքաս , դուն կ'ուզե՛ս որ հասնիմ փափաքիս , չէ՞ , ինծի քիսնո մը կ'առնե՞ս . . .

— Շա՛տ աղէկ , աղջիկս . . .

— Մեռսի՛ . . . ուրիշ բան մըն ալ պիտի ըսէի . . . մաման չտտ կը յոգնի կոր , անոր համար մասձեցի որ , պզտիկ սպառուհի մը բռնենք , ի՞նչպէս կ'ըլլայ . . .

Ղուկաս աղան , գործնական մարդ , աղջկանը բաշտանքներուն հետ իր . . . հաշիւներն ալ ունէր : Դաշնակ , սպասուհի՞ , երկուքը մէկէն . . . ասոր ծայրը ո՛ւր պիտի երթար . . .

— Աղջիկս , ըսաւ , քու ուղածներդ զլիտու վրայ , աւելա՛ , կա-րողութիւննիս չի ներեր . . . կա՛մ մէկը կամ միւսը . . .

Ու դաշնակին որոշում տրուեցաւ :

[Յաջորդով]

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Վ Ե Ր Ա Ղ Ա Ր Զ Ը

Կ'երբամ լսիկ ու գլխիկը խօկալէն ,
Հովին տուած անջանքիս քելն անհուն ,
Ու կ'երկարի՛ քմայօրօր , համօրէն ,
Դիկիւտան դէմ մայրամուտի պահերուն :

Վերջալոյսը կ'աչի համբուս վրայ լուս .
Կը քառանայ լուսիւնը՝ զալարուն ,
Միջոցին մէջ խունկի նքման հեծաբոյր .
Ի՛նչ քաղցրութիւն օրհասին մէջ արեւուն :

Թաղմաստուն կ'ամայսնա՛յ ալ համբուն .
Կը տարամայ հեռանկարն մանիւսակ ,
Ստուերներու գործէջքին տակ անասնիսն .

Ու հեռուէն տեսնա՛մ նրազ մը միմակ
Ինձ կ'երկարէ մեծմարտեմքն իր աղուտ՝
Դողոյք քեզ խնջած հոգւոյս դիմաւոր :

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ԿԵՕՔԷ ԵՒ ՀԻՒԿՕ

Դ.

Ֆրանսացի *նովելիստ* գրականութան կարապետին մեծութեանը վրայ Վալմարի վարպետին ունեցած կարծիքն ու համոզումներէն շատ էր բան միայն Հիւկոյ ծանօթ էր՝ Conversation avec Eckermann գործին նրասարակութենէն ստալ։ Վիքթոր Հիւկոյ իր գիրքին մասին եղած աննպաստ կարծիքները հիանալիօրէն քնդուներէ։ Բայց բանաստեղծներու ընկերային դերին մասին իր ասածը համոզուած չէ կրցած վաղեմի գոյս ունիլն Կեօքէն՝ կապարի փախել, անցի որ Վիքթոր Հիւկոյ իր մէկ գործին մէջ Կեօքէի անունը ընտրեց իբր սիպար գերման գրական փառքին։ Վիքթոր Հիւկոյ ընկերային ընդարձակ վէպը 1862ին լոյս կ'ընծայուի եւ յաջորդ տարին է որ Entretiens avec Eckermann-ը քարգմանութիւնը Ֆրանսական հասարակութեան կը ծանօթացնէ այդ քննադատութիւնը, որ մեծ անակնկալ մը կ'ըլլայ, եւ որ կ'արհամարհուի անոր կողմէ գործի միջոցէն արտաճող եւ արդի գրականութեան ջեւեր ստորած են կոչել։ Բայց Entretiens-ի նրասարակութիւնը իրենց մէջ տիրող անհամաձայնութիւնը չհարբեց։ Այդ ասեցէն ամէն բան վերջացած է։ Կեօքէ մեծ մարդը կարգէն ինկած է եւ նոյն իսկ մեծ բանաստեղծի տիպարէն՝ երբ Էլմիրընի Մարդկային Ներկայացուցիչները գործին Ֆրանսերէն քարգմանութիւնը նոր համբաւ մը աւելցուց այն մարդուն մեծութեանը վրայ՝ որուն զգայնոս են նկարագրող վրձինը վայելած էր Ֆրանսայի ուսման իբր գրականութիւնը։ Կեօքէ Ռիշարդ Շեյսպիրի մէջ մեծ հաննարներու կարգին մէջ չէ յիշատակուած, որոնք մարդկային միտք իր կատարելաւ քարձարութեան հասցուցած են։ Ռիշարդ Շեյսպիր գործը՝ բանաստեղծներու շարքը գծած ժամանակ, երբ ամէն կարգի մեծ մարդիկնէր կը բուէ, այդ ասեցէն որ միայն գերմանացի գրագէտին անունը կը յիշատակէ։ Եւ գիրքին «Ճեմարանութեան Փնդեցիկ Ծառան» կոչուած վերջին գլուխը սուսիկ յարձակողականի մը կը սկսի Վալմարի խնայանքին դէմ սուղեւ։ — Երբ

բանաստեղծ մըն է որ կը խօսի, բանաստեղծ մը՝ ազաւ, հարուստ, երջանիկ, անբռնաբարելի ըլլալու աստիճան, իրմէ մահուր, անկեղծ, օգտալի ուսուցում մը միայն կ'ակնկալեն։ չենք կրնար հաւատալ որ այդ ուսուցումը մարմնաւայ այն շեռակ տնձի մը վրայ որ գիտակցութեան անապաս մըն է։ Հիւկոյ իր խօսակցութիւններուն ինչպէս նաեւ իր գիրքերուն մէջ զանց կ'ընէր ալ միտքի եւ գործունէութեան պէտքերուն հոյ նշանակել Կեօքէն, Կեօքէի անունը Վիքթոր Հիւկոյի սեղանի խօսակցութիւններէն վստաւած էր։ 1874ին գրած մէկ տուտը, որով Հիւկոյ գրագէտ մը կը նրաւիւրէր, կրնայ իր ասելութեան վերջին մէկ ապացոյցը հանդիսանալ։ «Ես Կեօքէն չեմ սիրէր, որովհետեւ իր ներքին մարդը՝ կը նուաստացնէ իր բանաստեղծի արժանիքը, ինչպէս վատ սիրտ մը իմացականութեան արժէքը կը պզտիկցնէ»։ Այսպէս էր որ հետզհետէ այս երկու մարդոց մէջ փարուեցաւ աւելի խոր վիճի մը։ Այն զլխաւոր հաւասարիները, որոնք այս երկու հանձնարեղ միտքերուն մէջ իրարու քննադատ եւ անհամաձայն են, բերեւ զիրար շօտափեն անհանկարծեան զայտնիքին խորհրուն մէջ։ Բաղդաստութեան իմաստակ խաղը՝ որ այնչափ անհեթեթ կը դառնայ՝ երբ հասարակ չափ չունեցող երկու եղբեր է որ կը համեմատէ, շատ իրաւացի կը դառնայ սակայն՝ երբ խնդիրը Կեօքէի եւ Հիւկոյի շուրջն է։ Մէկուն գաւառանքն է monism-ը՝ որ կ'ըսէր։ Տիեզերք անձայրածիր է եւ կը ձգտի անդադար համաստեղ վիճակէ մը դէպի այլատեւ վիճակ մը։ մինչ միւսին գաւառանքն է dualism-ը եւ իր փիլիսոփայութեան խաբիսը կը կազմէ։ Այս գաղափարներէն ինչ կամ շատ քաջորոշ կերպով կը տեսնուէր իր բանաստեղծներուն մէջ։

ՖԵՐՆԱՆ ՊԱՆՏԵՆՇԵՐԿԵՆ

Քաղեց

[Վերջ]

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

ԿԱՐԴԱՆԱԼ ՄԱՍԻՍԻ ԹԻԻ 20Ի ԿՈՂԴԻՆ

ՎԵՐՋԻՆ ԷՋՐ

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

ՀԱՆԴԷՊ “ՄԱՍԻՍ”-Ի

Արեւելք՝ որ Մասիսի հրաւիրակութեան սկզբնաւորութենէն՝ համակիր վերաբերում մը ունեցաւ միտք եւ խափառութիւն յիշատակութիւններով պատուեց ամէն առիթով՝ անոր հրաւիրակութեամբ, Մասիսի Բ. Տարեւոյցանի սկսածը կ'ողջունէ երեսնաւոր տարեւոյցով, զորս հանդիման կը կարգանք։

Մասիսի Դրոսեան Շարաւաղեանքը Ենովք Արմենի խմբագրութեամբ արդիւնաւոր կերպով բոլորեց իր առաջին տարին։ Տեղացի եւ գաւառացի ծանօթ գրագէտներ աշխատակցեցան Մասիսին, որ գրական գեղեցիկ ծաղկեպունք մը արտադրեց։ Մասիսի մէջ հրատարակուեցան գլխաւորապէս գրական ու քննադատական ուսումնասիրութիւններ, բանաստեղծութիւններ, պատմութիւններ, քանի մը օտար եւ Հայ գրական դէմքերու մասին տեղեկութիւններ եւ, ե օրուան խնդիրներու մասին խմբագրականներ։ Դրական լուրջ շարժումներով մը ստացանք չեն պակսիր Մասիսի։ յոյսովս յետագային մասը ծաշակով ընարուած են եւ մասամբ ալ գործողութեամբ ձեռք բերուած։ Պոլսոյ հրապարակին վրայ լաւագոյն գրական թերթն է Մասիս եւ արժանի բաշակերութեան։

Արեւելք

Մեզի զրկուած հրաւիրակիւնք մը հանդիմանով կը տեղեկանանք թէ՛ երկուշաբթի օր, 17/30 զեկտ, ժամը 7ին, Պոլսոյ Բէյի Հայ եկեղեցիին մէջ տեղի պիտի ունենայ ամուսնութեան խորհուրդը առեւարական աշխարհին մէջ ծանօթ եւ իր գործունեայ ու համակրելի բնաւորութիւնով սիրուած երիտասարդ վաճառական Լեւոն Է.Ֆ. Արմաղանեանի՝ Օր. Զապէլ Էօմիւրեանի հետ։

Տ. Յատով կ'արձանագրենք կորուստը Հայ երիտասարդի մը՝ մահովը Պրն. Արտաշէս Միքեղեանի, անձնասպանութեան եղեռական պարագաներու մէջ, կատարուած բերախիր բնակարանին մէջ, սիրային խնդիրի մը հետեւանքով, ինչպէս կ'ենթադրուի։ Մարմինը անձնասպան երիտասարդին, — որ զրական աշխատութիւններ ալ ունեցած էր առեւելին, **Արեւելքի** իր աշխատակցութիւններով՝ օրուան նիւթերու վրայ, — ամբողջութեամբ Ռումէլի-Հիւսիսի Ազգ. Գերեզմանատունին մէջ, անշուք թաղուած։

Մեր Կենսութիւն

Սերաստիսի նորընտիր Առաջնորդ Տ. Թորգոմ Վարդ. Գուշակեան, երեքշաբթի մեկնեցաւ իր պաշտօնատեղը։ Երիտասարդ համակրելի Գրեկեանքեանը, որ եկեղեցական արդիւնաւոր գործունեութիւն մը կը ձգէ իր ետեւը՝ Գրեկեանքի մէջ, ամէն վստահութեամբ կը ներշնչէ թէ՛ իր նոր պաշտօնին մէջ պիտի յանձնուի կրթական-եկեղեցական կորովի ու եռանդուն գործունեութեան մը, օգտակարապէս ծառայելով Սերաստացի համայնքին, որ պէտք է զինայ օգտուիլ փորձ ու խոհուն առաջնորդին վարչադիւտութենէն ու հովուական կարողութենէն։ Կը շնորհաւորենք Տ. Թորգոմ Վարդ. ի պաշտօնը եւ հովուական գեղեցիկ ապարդէզ մը կը մազենք։

Տ. Բակ Տ. Բարգէն Ծ. Վարդ. Կիւլէսերեան՝ ուղեւորեցաւ Գրեկեանք փոխ-վանահայրի պաշտօնով։

Տ. Արտաշազ Վարդ. Գալէնտերեան, երիտասարդ Գրեկեանքեանը, որ ամիսի մը չափ առաջ իր նոր պաշտօնատեղը՝ Թօլատ ուղեւորած էր, կը հետադրէ Պատրիարքարան թէ՛ ժամանած է։ Պարկեշտ ու զործունեայ Գրեկեանքեանէն լիովին կրնայ օգտուիլ Թօլատացի Հայ համայնքը, որ զայն գեղեցիկ պաշտօնավարութեան մը մէջ տեսնելու համար՝ պէտք է խնայէ իր օժանդակութիւնը։

Տ. Վենետիկի Միքիմ. Միտրանութեան նշանակելի դէմքերէն մէկին, Հ. Յովնանէս Ծ. Վ. Թորոսեանի բանաստեղծեան քանեկանգամեայ արժամա յորելանը կը ածուի հանդիսաւորապէս այս շաբթու, իր վարած Մուրադ-Ռաֆայէլեան Վարժարանին մէջ։ Այս տոբով զինքը ծանօթացուցած ըլլալու փախքը կ'ունենանք քանի մը կենսագրական գիծերով, — Հ. Յովն. Ծ. Վ. Թորոսեան քնիկ Պատրիարկի խիստ փոքր տարիքէն կը զրկուի Ս. Դազարի մենաստանը։ Հազիւ քանամեայ կ'ստանէ վարդապետական սքեմը։ Այդ նախաբային իսկ, վանական տեսչութիւնը գնահատելով իր կարողութիւնները՝ իրեն կը յանձնէ վարժարանին փոխատիարութեան եւ մատենագրութեան վաստակութիւնները, զորս մեծ ձեռնհասութեամբ կը շարունակէ երկար տարիներ։ Պարագած

է նաև կարգ մը գրական աշխատութիւններու՝ որոնցմէ մէկ քանին արդէն լոյս տեսած են ։ Այս տարի մեկնեցաւ Պոլիսէն , ուր կը վարէր Դատը-Քէօյի Միխիմարեան Վարժարանին տեսչութիւնը՝ արդիւնաւոր և փայլուն կերպով ։ Հիմա տեսուչ կարգուած է Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեան Վարժարանին , զոր վստահօրէն բաղձացուած կրթական վիճակին պիտի հասցնէ ։ Շնորհաւորելով յարգելի Յարկեարը՝ կը մաղթենք որ՝ կրթական բեղմնաւոր կեանքի մը պոսակը հիւսնէ ծակտին , մինչև տիեզիկի յոբելաներ ։

§ Ա. Էջիմիսի Սինոդին մէկ պաշտօնագիրը կը ծանուցանէ թէ՝ օրէնքին համաձայն՝ Սինոդի երիցարդին անդամներէն Տ. Գեորգ Արք. Սուրենեանց կամողիկոսական տեղապահ կարգուած է ։ մինչև ընտրութիւնը և հաստատումը՝ նոր կամողիկոսին , վարելու իրաւունքով Հայրապետին իրաւասութեան վերաբերող գործերը , Սինոդին միջոցով ։

§ Գուռ-Քէօյի Միխիմարեան Վարժարանի այս տարւոյն ընծագաւարաններէն Պրն. Պրն. Անարմ Տատուբեան , Պետրոս Էմսպալեան և Վաչրաժ Դարդասեան՝ այս շարքու Խաւիա ուղեւորեցան ։ Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան Վարժարանի երկամեայ դասընթացքը աւարտելէ ետքը՝ պիտի անցնին եւրոպական զանազան համալսարաններ , Առաջինը պիտի հետեւի Գեղեցիկ Դպրոցեան (Belles-Lettres) , երկրորդը՝ երկրաչափութեան և երրորդը՝ բժշկութեան ։

§ Պարտիզակէն կը տեղեկացնեն թէ՝ Բարձր. Վարժարանի նախկին ասնէրէն Տիգրան Տ. Անդրեասեան՝ որ իր տաղանդով փայլուն յաջողութիւն մը ձեռք բերած էր երաժշտութեան մէջ՝ նախորդ շաբաթ օր շնչերակի մը պայծառէն յանկարծամահ եղած է Զուլիգերխի մէջ ։ Վերջին տարիներու միջոցին կը վարէր Բարձր. Վարժարանի երաժշտութեան ուսուցիչի պաշտօնը ։

ՍՏԱՑՈՒԱԾ ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

Ստացանք 1908 Տարիի հատորը Նշան-Պապիկեան Տարեցոյցին , շանեկան ամէն տարւան պէս , զբօսեցուցիչ , հրամանգիչ և օժտուած աշխատակցութիւններովը պոլսահայ ծանօթ գրագէտներու ։ Սագանան մաքուր արագրութիւնով , խնամուած կազմով և խմ-

բագրութիւնով այս Տարեցոյցը՝ գեղեցիկ մաս մը կը կազմէ նախորդ տարիներու շարքին , արժանի ընթերցանութեանը ամէն կարգի զբաղեցնելու ։ Դինը 5 դրշ. ։

§ Ռ. Յ. Պէրպէրեանի **Գալուց և Գալուսիսնը** , այն ծանօթ հատորը , որուն լոյս տեսնելուն կը սպասուէր և ուր հեղինակը ամփոփած է Թրքահայ Թերթերու մէջ ժամանակին հրատարակած յօդուածներէն և ուսումնասիրութիւններէն մեծ մաս մը ։ Դրական մեծ շանեկանութիւն ունեցող և ընծերցանութեան արժանի հատոր մը , մատենադարանի գեղեցիկ զարդ մը ըլլալու կոչուած ։

§ 1908 տարիի հատորը **Ժողովրդական Տարեցոյցին** , շանեկան իր պէսպիսուն բովանդակութիւնովը ։ Նշանակելի էն մանաւանդ երկու կարեւոր կենսագրականներ՝ Գեորգ Զարդարեանի և Միսէնիսիւսեանի վրայ , որոնց առաջինը գրած է Արշակ Ալպոյանեան և երկրորդը Տարեցոյցին հիմնադիրը հանգուցեալ Նշան Պէրպէրեան ։ Զուարճալի էջ մը կը կազմէ հանգուցեալ Մ. Գալեցիսեանի Ակնցիւնեւու բարբառով մէկ գրուածքը ։ Տարեցոյցը հրատարակուած է Զարդարեան Գրատունին կողմէ և գինն է . իբր մարմնացում . . . ժողովրդականութեան , 3 դրշ. ։

§ Իլըճեան Դրատունին կողմէ հրատարակուած **Ընդարձակ Երգեցողութիւնք Առաջօրեան և Մ. Պատարագի** , զպիւրներու յատուկ առաջնորդ-տեսարակ մը , Տէր-Ներսէսեան մաքուր տպագրութիւնով , Դինը 60 փալա ։

§ Մ. Մինասեանի հեղինակած նորատիպ **Անդլ.-Հայ.-Թուրք. Բառարանը** , ստուարածաւալ ու աշխատուած հատոր մը , որ կ'ուղղուի Ուսանող Սերունդին , ինչպէս լեզուի ուսումին կարօտ անձերու մէկ մեծ պէտքին ։ Բ. Տպագրութիւնն է այս հատորը հեղինակին առջի գործին , յաւելուածաբար ճոխացած և խնամքով տպագրուած Տէր-Ներսէսեան Տպարանէն , յանձնարարելի ամէն անոնց՝ որոնք պէտքը ունին անգլերէն լեզուի Բառարանի մը ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ.

ԱԼԹԸՐԱՐՄԱԳԵԱՆԻ ՄԱՅԸ

Վ.Ա.ԱՍ.Ա.Ա.Ա.Ն ԵՒ ԳՈՐԾԱՐԱՐՈՒՄՆԵՐ

Հայ առեւտրական աշխարհէն անհետացաւ կարեւոր ու յարգուած դէմք մը, մահով ծանօթ վաճառական և կաշիի գործարանատէր Յարութիւն Էֆ. Ալթըբարմագեանի։ Հանդուցեալ ուրբաթ գիշեր անակնկալ կերպով կնքեց մահկանացուն, խոր սուգի մէջ ձգելով իր ընտանիքը, զաւակները, եղբայրը, ընտանեկան պարագաները և ազգականները։ Հայ և օտարազգի յուզարկաւորներու հոծ ընտիր բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ յուզարկաւորութեան տխուր հանդէսը, Սիլւատրի Ս. Խաչ Եկեղեցիին մէջ։ Հանդէսին կը նախագահէր Տ. Դրիգորիս Արքեպիսկ. Յովհաննէսեան, իր շուրջը ունենալով Վ.Լ.Նապետեան Տ. Միքայիլ և Երէցեան Տ. Գէորգ Արքեպիսկոպոսները, Տ. Եզնիկ Գալիազմեան, Տ. Վահան Յակոբեան Դ. Վարդապետները և Տ. Ներսէս Պէրպէրեան և Տ. Վրդանէս Գալլազմեան Վարդապետները, Ս. Խաչի և Ս. Կարապետի եկեղեցիներուն, ինչպէս ուրիշ Թաղերու բազմաթիւ քահանայներ և զպիւրներ։ Ընկուզենիէ գեղարկերո զաղաղը կը հանգչէր Թաւաշապատ քաղաք մանարեմին վրայ, ուր շարուած էին բազմաթիւ ծաղիկապաւներ, զորս զրկած էին հանդուցեալին այրին՝ Տին. Մարիամ Ալթըբարմագեան, զաւակները, Տէր և Տիկին Յակոբ Ալթըբարմագեան, Սիլւատրի Միացեալ և Ս. Կարապետի Թաղ. Խորհուրդները, Իճատիէի վարժարանի Հոգաբարձութիւնը, Ս. Խաչ վարժարանի Ուսուցչական Մարմինը, Ս. Խաչ և ձեմարան վարժարաններու կարօտ ուսանողներու Խնամակալութիւնը, Տէր և Տիկին Մանուկ Մուշեան, Յ. Սինանեան, Բեմրաքի Բագարօ, Ալթըբարմագեան վաճառատունի պաշտօնեաները և զեւ ուրիշ շատեր, զրկուած համակիրներու և ազգականներու կողմէ։ Երգեցողութիւններու աւարտումէն ետքը Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկ. Երէցեան առաջացաւ բեմ, ուրիշ շատ յուզիչ և զեղեցիկ դամբանական մը խօսեցաւ։ Դամբանախօս Արքազանը կեանքի և մահուան վրայ պերճախօս տեսութիւն մը ընկելով, պատկերացուց հանդուցեալին անհատական, ընտանեկան և ընկերային կեանքի զիծերը, նկարագրեց անոր անհատականու-

թիւնը՝ իրը տիպար քրիստոնեայ մը, ընտանեկան կեանքին մէջ բարի, առաքինի և ընտանեկէր հայր մը և ընկերային կեանքին մէջ՝ լուրջ, խոհական և գործունեայ անձնաւորութիւն մը, որ զիսցաւ իր կեանքին մինչև վերջը աշխատիլ, որչափ իր անձին, զիրքին ու գործին համար, նոյնչափ ալ հասարային գործերու մէջ։ Որչափ պատուաւոր վաճառական, յարեց, նոյնչափ արդիւնաւոր Թաղական է եղած՝ եկեղեցական մատակարարութիւններու մէջ, և օգտաշատ հոգաբարձութիւն կրեց գործերու մէջ։ Ամէն մարդ հիացում մը ունի, ամէն շրթունք զովեաւ մը կը կարդայ անոր վրայ։ Յետոյ Տ. Գէորգ Արքազան հանդուցեալին հոգիին հանդիստ մաղթելով, անոր այրին, զաւակներուն և եղբորը միմիարական խօսքը ուղղեց։ Մեռելական արարողութիւններու աւարտումէն ետքը, հանդիսաւոր Թափօր մը կազմուեցաւ, զոր կ'առաջնորդէին Պարսիկ Հիւպատոսարանի Բաղադները։ Դաւաղին ծաղերը բռնած էին Տիգրան Տէր-Ներսէսեան, Սիհրան Պէրպէրեան, Կարապետ Պատմանեան, Մագաւառ Նառլեան, Դրիգոր Էրմէնեան, Բարսեղ Աւետիսեան և Տիգրան Իսպէլեքեան Էֆէնտիները. իսկ կերտները բռնած էին Ալիքան Թափալեան, Միսաք Թափալեքտեան, Էմմանուէլ Բագարեմօ, Տաղուտ Ռուսօ, Բիւրեաքօ Խալիպարճըլլը և Միհրան Ինտոնեան Էֆէնտերը։ Թափօրը ուղղուեցաւ դէպի Բօսմա-Եօլի, ուր շրջի մեռելախօսք մը կը սպասէր, փոխադրելու համար զաղաղը Սիլւատրի նաւամատոյցը։ Յուզարկաւորներէն շատեր իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հանդուցեալին եղբորը՝ Յակոբ Էֆ. Ալթըբարմագեանի և շատեր ալ բազմաթիւ կտակներով հետեւեցան Թափօրին մինչև նաւամատոյց, ուր յատկապէս վարձուած Շիրքէթի Խայրիէի շոգենաւ մը կը սպասէր, Թափօրը Սիրքէթի փոխադրելու համար։ Սիրքէթի նաւամատոյցէն բազմաթիւ կտակներով շատ մը յուզարկաւորներ հետեւեցան մեռելախօսքին, մինչև Պալլազլի Ազգ. Գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ Յարութիւն Էֆ. Ալթըբարմագեանի ժամրինը, իր ընտանեկան դամբարանին մէջ։

Մեր զաւակցութիւնները կը յայտնենք Այրի Տիկին Մ. Յ. Ալթըբարմագեանի, իր զաւակներուն, Յակոբ Էֆ. Ալթըբարմագեանի և պարագաներուն։

Հիմնադիր Կ. Ս. Ինիթիճեան։ Արտօմաք ՏՕԲԹ. Ե. ՄՍՍԻՄ. Տպագր. ձեռն

ԱՌՇՅՍ . . . ԱՌՇՅՍ . . . ԱՌՇՅՍ . . . ԱՌՇՅՍ ՏԵՍԱԻ
 = Գ. ՏԱՐԻ = ՊԱՅԿԵՐԱԶԱՐԳ = 1908 =

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

Երե կ'ուզեի

Զանձոյթնիյ փարսեզ,

Զրօնուլ

Կուշտուկու խնդալ

աւ նոյն խակ . . . բան մը ստովիլ

Միմիայն հասա մը

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏՍՐԵՑՈՅՑ զնեցեի

Արտիստէ իր երկու-հար-իւր-ութ-սուէնի հոսի էջերուն մէջ

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏՍՐԵՑՈՅՑԸ այս տարի կու տայ

միմիայն հինգ զրուշի փոխարէն

Այս անհատարտիստի մը Օտմ. Օրէնքին [Ժառանգական] վրայ

ժամանցներ՝ պարտալ ժամանակ ունեցողներուն

Մանկական խեղացի ու անխելք խօսքեր

Զուարճալիքներ

Գիտնալիք բաներ

Լօյլիկի խօսքեր

Նաեւ առատ առատ Ղազարոս !!!

Իսկ գրական բաժինին այս տարուան աշխատակիցներն են՝ Մուշեղ Եպիսկոպոս, Տիկ. Զ. Հ. Ասատուր, Տիկ. Զ. Եսայեան, Հ. Ասատուր, Ալ. Գալստիան, Յ. Գ. Մրմբեան, Ռ. Որբերեան, Յ. Գաղանձեան, Օ. Զիֆթէ-Սարաֆ, Միսաք Մեծարեան, Գարրիէլ Խանձեան, Հրանտ Նազարեան, Մ. Պարսամեան, Բրոֆ. Կ. Սողկեան, Գեղամ, Է . . . Ե. Թօլայեան:

Տարեցոյցս այս տարի կու տայ նաեւ իր աշխատակիցներէն մեծա-
 դոյն մասին լուրջովին անտիպ ու յատկապէս Լայրցիկ պատրաստած
 hors texte լուսանկարները: Եւ առանք ամէնը միմիայն 5 զրուշի փոխարէն:

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԻԹՈՎ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆՈՒԷՐՆ ԵՐԵՆ

Աղջիկներու համար՝

ԽՆՉ ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱՅ ԴԵՌԱՏԻ ԱՂԶԻԿ ՄԸ

Մանկերու համար՝

ԽՆՉ ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱՅ ԴԵՌԱՏԻ ՄԱՆՉ ՄԸ

Կուէրի համար բազմազոյն զեղեցիկ կողքով մը զարդարուած

Եւրամանգիւր հասար 7 դր.

Կեդրոնացիկն է ՍԱԳԱՆԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՎ ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Այս բանասիրական ու փիլիսոփայական դործը, գրուած բարոյական ու կրօնական շինիչ փաստարանութիւններով և խառնող Յովհ. Պրուսայի Տէրոյենցի լիակատար կենսագրութիւնը և հոգեբանութիւնը, հրատարակուած է խնամուած տպագրութեամբ, երկու լուսանկարով և մէկ վաւերական ձեռագիրով: Եկեղեցականներ, ընտանիքի հայրեր, բանասէրներ հաւատարմօքն կրնան օգտուիլ այս դործէն, որ է միանգամայն 1909 Դարու թուրքահայերու իմացական կեանքին վրայ տեսութիւն մը: Կը ծախուի թոյր գրալաճատներուն և հեղինակին քով: Գին 12 1/2 դր:

ԳՐԱՏՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՍԿԻՆԱՆ

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ ԽՍՆ, Կ. ՊՈԼԻՍ

Գրատունին սեփական զիրքերուն զեղչն է 0/0 30. Իսկ տպագրողներու համար, ա՛լ աւելի:

Լուսագոյն զեղչը կը տրուի նաեւ — տեսակի և քանակի համեմատ — տրիշ հեղինակներու ամէն տեսակ դասագիրքերուն վրայ:

Պահանջուածները միայն՝ ճամբու կը դրուին Պոլիսէն մեկնող առաջին թղթատարով, կը բաւէ որ գրատունին միակ սիղլուներին համաձայն՝ յանձնարարութեան փոխարմէքը ղրկուած ըլլայ:

Նոր Տարիի տախտակ մեծաքանակ պատրաստ ունի նաեւ ամէն տեսակ Օրացոյց, Տարեցոյց, Յուշատետր և այլն, համառօտ, ընդարձակ, պարզ կամ սոկեղծ:

Կը պատրաստէ տպագրական ամէն տեսակ գործեր, խիստ աման զինով, չա՛տ մաքուր տպագրութեամբ:

Ապառիկ յանձնարարութիւնները չեն դործողրուիր:

Գրեական հարցերու և մանրամասն տեղեկութիւններու համար զիմեւ Գրատունին հետեւեալ հասցեով.

درسمات خراسانچيان خانه كتابخانه جديد

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ. — Մ. Գ. Մինասեանի Անդր.-Հայ.-Հայաստան թուրքերէն Բառարանի երկրորդ տպագրութիւնը: Կեդրոնական լինէ հրատարակչին՝ Ե. Մալխասեանի վաճառատունը, թիւ 424, Ուլուն Չարչը Պաշը. կը գտնուի թոյր գրալաճատներու քով, գին 50 դր: Նոյն տեղը կը գտնուի նաեւ Մ. Գ. Մինասեանի Հայ-Անգլ. Բառարանը (ոչ կեղծը): Գին 30 դր: Մեծաքանակ զնոդներու մասնատր զեղչ:

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կեղեցիկ տղադրութիւնով, գեղարուեստական կողքով, գրական հրապուրիչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ. Կեղրոնատեղ՝ Սթամբուլ, Շիրին խան, թիւ 7, Օննիկ և Ընիկ: Կը դանուի ամէն գրավաճառի քով:

Ամէն կարգի տղադրութիւններու համար, խնամուած, մաքուր ու արուեստին սրահանջումներուն համաձայն կատարուած, գիմել՝ Պոլիսէն թէ զաւառներէն՝ տղադրիչ Ջիզն Փափաղեանի, Պոսլը Ալի Ճատաէսի, թիւ 34:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ, Ս.ՄԱՍԻՍ: Ամասիայի և չըջականե-
րու գրական պէտքերուն լիուրի դոհացում տալու համար է որ հիմ-
նուած է այս նոր գրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաս-
տուին արուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձ-
նարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն,
իր միակ կեղրոնատեղ լաւագոյն գտնողիրքերու և լաւագոյն հրա-
տարակութիւններու:

ՄԱՆՁՈՒՄԷ Միակ սուտուան Հայաթերթը, կը հրատարակուի ար-
շապոյտին, և առաւել խիստ կանուխ՝ կը դանուի Պոլի-
սի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քա-
ղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, տն-
տեսական և ընկերային յօդուածներ: Զորեքչարթի և չաքաթ օրերը կը
հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւ-
արական և գրական գրուածքներու: Գինն է 10 վարա: Տարեկան բա-
ժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 զրշ., գաւառ՝ 108, արտասահման՝ 25
ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն
գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. Լ. Գ. Գայսէրեանի
հասցէին՝ 38, Պոսլը Ալի Ճատաէսի:

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ.—Հրատարակելու Քասիմի այս աշխատասի-
րութիւնը, որ կը պարունակէ ընտանեկան և ընկերական հարցերու
վրայ շահեկան և հետաքրքրաշարժ աեսութիւններ, ժողովրդական
ոճով: Քասիմի գրեկակերպը արդէն ալծանօթ ըլլալով հանրութեան,
վստահօրէն անոր այս գործն ալ պիտի արժանանայ սիրալիր ըն-
դունելութեան, որով վարձատրուած են միշտ հեղինակին գրիչի ար-
տադրութիւնները: Գինը, խիստ աւան գրուած է, որպէս զի ժողո-
վուրդին ամէն դասակարգին մատչելի ըլլայ: 3½ զրշ., 200 էջ ունե-
ցող այս գիրքին համար, կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ, 1908

Հրատարակութիւն Ջարդարեանի Գրատունի

Եւսյ տեսած է Ժողովրդական Տարեցոյցի նոր տարին, որ իր մէկէ տակին հրապարակ է օգտակար հանգամանքներով անրաժան բնկերը ըլլալու սահմանուած է ամէն մարդու: 208 էջերու մէջ խտացուած են, բացի սովորական Օրացոյցէ, ծանօթ գրողներէ զբաղման հաստատներ, համով գումարձարիքներ, կենսագրութիւններ, մենախօսութիւններ, լուսնատիպ պատկերներ, գիտական գրութիւններ, վէպեր, պատմութիւններ, խաղեր, գրօտանքներ և մանաւանդ ծանօթ գրող հանդուցեալ Մ. Գալէնտէրի վերջին գումարձարի յօդուածը, ակնյիւր բարբառով: Հետաքրքրական և չափեկան մաս մը կը կազմեն այս տարուան Տարեցոյցին մէջ նոր մրցումներ և նուէրները, որոնք են, ոսկի և աղամանդաղարդ մետաղեօն սիրտ մը, 50 հատորներէ յաղկացող Հայ պոետական բանաստեղծական երկերու մատենագարան մը, 10 ոսկինոց նուէր մը, երեքիզուեան փառակազմ նամակադրոշմի ալպօմ մը, 500 զանազան նամակադրոշմներ, երկու հեղինակութիւններու ճրտագէտ հրատարակութիւն մը, չըջանալուած գեղեցիկ մանրանկար մը ևն ևն: Այս տարուան Ժողովրդական Տարեցոյցի գնորդ-բնիկերցոյցները հաճաքը պիտի ունենան նաև ստանալու ձգի կերպով անտկնկալ նուէր մը, գեղեցիկ պատի տարեցոյց մը, աննեակներու պատերը զարդարող: Ժողովրդական Տարեցոյցի այս առաւելութիւններուն միացած է նաև ոսկեզօծ կաղք մը, ինչ որ կարելի կ'ընէ զայն իր հաճելի կազանդի նուէր ծառայեցնելու՝ մեծին, պզտիկին, ծերին և երիտասարդին: Բոլոր այս առաւելութիւններով մէկտեղ, Ժողովրդական Տարեցոյցը կը ծախուի անհամեմատ կերպով ատեն զինով մը. ոսկեզօծը 5 գրչի կաղմուածը 5 զրչ փօտի ծախումով՝ 1 զրուշ տակի: Դիմել Գրախմատ հրատարակիչ Ջարդարեան Եղբայրներուն, Կ. Պոլիս, Չաքմաքճըլար, թիւ 24-26:

Ջարդարեան Գրատունի նոր հրատարակութիւններն են նաև.

1.—Տասնեկիսկերորդ Դար եւ Յ. Պրուսացի Տերոյեկեց, Յ. Գ. Մըմբրեանի զլուխ-գործոցի, որ պատկուած է Յովն. Լըմբրեանց Գրական Մրցանակով. կը պարունակէ իր մէջ Տէրոյեկեցի լուսատիպ պատկերը ու ձեռագիրը և երկերէն մասեր: Էջ 260. գին 12 1/2 զրչ:

2.—Կեանքի Գործածութիւնը.—Նշանաւոր անգլիացի զրօզի մը, Լորա Էյլըզըրիի (Սըր Ճօն Լըպպօք) աշխարհածանօթ այս երկին բնիկերցումը յանձնարարելի է ամէն դասակարգի երկեւ ուսանողներու իր հաճելի և օգտակար հանգամանքով: Անգլերէն լեզուի լեզուագիտութեամբ է Գ. Ոսկեան, գին 7 զրչ:

1

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԻՆ ՄԷՋ

Կը գտնուի Կազանդի նուէրի համար ընտրեալոյն զիրքերու ճօն միջերք մը, որմէ կ'արժէ որ օգտուին ծնողքներ: Գեղեցիկ ընտրութիւններ են մանաւանդ՝ նորատիպ ստուար գործը ողբացեալ զբաղեալին՝ Ռ. Յ. ՊէրՊէրեանի:

ԳՊՐՈՅ ԵՒ ԳՊՐՈՒԹԻՒՆ

[Արժէքաւոր ու մատենագարանի զարդ ըլլալու սահմանուած գեղեցիկ հատոր մը]

ԴՈՒՆ ՊԵՏԻ ԸԼԼԱՍ՝ ԴԱՒԻԹ ԽԱՉԱՌՆՑ-Ի

[Օգտաւէտ հատոր մը տղոց համար]

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Գ. ՊԱՂՏԱՍԵՐԵԱՆ-Ի

[Հրահանգիչ, զբօսեցուցիչ և հետաքրքրական]

Եւ ուրիշներ, զորս տեսնելու համար՝ տէաք չէ առիթ կորսնցնել՝ այցելելու Պալենց Գրատունը: